որ սահմանափակութիւնը բաւարար լինելուց հեռու է. և եպիսկոպոսի կամայականութեան համար ընդարձակ ասպարէզ է բացւում։ Քիչ կը պատահի, որ ծխականների մի մասը դժգոհ չլինի իր հովուից։ Եպիսկոպոսներին—ասում է «Müchner Noueste Nachrichten»—իրաւունք է տրւում իրանց նպատակների համար քաղաքական այսքարների դէպքում օգտուել նոր կանոնով. քահանան, որ պատկանում է եպիսկոպոսի ցանկութեան հակառակ այս կամ այն կուսակցութեան, և չի հրաժարւում Լանդտագի պատգամաւորի կոչումից, կարդում է յայտնի լրագրեր և օրագրեր կամ հրատարակում ու խմբագրում է—ամեն վայրկեան կարող է առանց դատի զրկուել պաշտօնից։ Ինչպէս, քահանաները դառնում են իրաւազուրկ։

---

## ԲՈՂՈՔԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ.

**Լուտերականների ժողով.**

Սեպտեմբերի 1-ին ն. տ. Բերլինում տեղի է ունեցել պրուսական աւետարանական եկեղեցուն պատկանող լուտերականների ժողովը, որին մասնակցում էին շատ աւելի մարդիկ քան սովորաբար լինում էր։

Ժողովի զբաղմունքներից առաջինն էր բողոք յայտնել մօտիկ ժամանակում Բերլինում գումարուած ազատ քրիստոնեաների համաշխարհային կոնգրեսի դէմ, որին ազատամիտ բողոքականները միացել էին հրէամիտ օտար երկրացիների հետ. ժողովի բացման ճառում՝ սուպեր-ինտենդենտ Վինցելը յայտնել է, որ անհրաժեշտ է բոլոր ուժով պաշտպանել աւետարանը՝ քրիստոնէական հաւատի էութեան վերայ յարձակւողների դէմ մաքառելով։ Պրոֆեսոր Գրիտցմախերը իր ռեֆերատում, որի բնաբանն էր «Եռանձնեայ Աստուածը՝ մեր Աստուածն է», ապացուցանում էր Եռանձնեայ Աստուծոյ մասին վարդապետութեան կարևորութիւնը. իսկ պրոֆ. Վիլկէն կարդաց ռեֆերատ «Հին կտակարանի նշանակութիւնը քրիստոնէական հաւատի համար»։

ժողովն ընդունել է ի միջի այլոց հետևեալ եզրակացութիւնները.—Ա. բողոքական-լուտերական եկեղեցու դաւանութիւնը է և կը լինի Եռանձնեայ Աստուածը, որը որպէս Հայր ստեղծեց աշխարհը, որպէս Որդի փրկեց նրան, և որպէս Սուրբ Հոգի՝ լուսաւորում է նրան։ Այն եկեղեցին, որ չի հետևում այս դաւանութեանը, էլ քրիստոնեայ եկեղեցի չէ. դրա համար էլ մենք ամենավճռական բողոք ենք յայտնում տղատ քրիստոնէական կոնդրեսին՝ որ քրիստոնէական հաւատի հակառակ քայլեր է անում, և ռացիոնալիզմին՝ աստուածաբանութեան վերաբերութեամբ։ Մենք սուրբ պարտականութիւն ենք համարում բոլոր աւետարանականների համար մնալ հին և յաւիտեանս գոյութիւն ունեցող դաւանութեան մէջ, և սերտ կերպով համախմբուել՝ նրան պաշտպանելու համար։ Աւետարանական եկեղեցու գործոնների նպատակը մենք այն բանի մէջ ենք տեսնում, որ ի պաշտօնէ և առ քրիստոնէական համայնքը սիրոյ համար այդ գործոնները արիանան այդ դաւանութիւնը եկեղեցում և դպրոցում պահպանելու համար։

Բ. ժողովը բողոք յայտնեց «Հին Կտակարանը» եկեղեցուց ու դպրոցից հեռացնելու դէմ. որովհետև Հին Կտակարանը մերժելով քրիստոնեայ ժողովուրդը զրկւում է «աստուածայայտնութեան էական մասից»։

Գ. Համալսարանների աստուածաբանական ամբիոններում կարգել աւետարանական—լուտերական դաւանութեան հաւատարիմ պրոֆեսսորներ։